

կէմի մեծ հանին ի վերայ ծովու իրբեւ զլեռ
մի՝ Գձ թօբ ունէր, ԺԲ էլքան եւ Ռ ճէնքճի, 50
Գձ կէմիճի: Եւ բոլորն կէմուն խանտակ էր
չինած եւ մէջն հող լցած. երկու խուլած լայն,
որ ոչ թօբ, ոչ թուֆար կարէր անցնիլ յինքն,
այլ սահէր եւ անկանէր Փնտրին ի ծով. զի
էր իրբեւ զպարխոյ: Եւ ասին թէ երեսուն 55
ամն հաղիւ կատարեցաւ. զոր Տէր Աստուած
չնահաւոր առնէ եւ յաղթող ի վերայ թչնա-
մեաց խաչին Քրիստոսի. ամէն եւ եղիցի:

Եւ այլ բազում իրս, բանս եւ զործս,
չէնք եւ կարգ ու սահմանք տեսաք եւ լուաք 60
աշխարհն այն, զոր սակաւս ի բազմաց գրե-
ցաք բազում աշխատութեամբ, սիրով ընթեր-
ցողացդ եւ յուսով ունկնդրողաց: Բայց ա-
ղաչեմ մի՛ հեղգալ եւ մի ձանձրանալ ձեզ՝
ապախտ առնելով գերկս վաստակոց իմոց. 65
զոր երբեմն ի կէմին, երբեմն ի վերայ գրաս-
տի, երբեմն իջեւանս եւ խաներն նստեալ
գրէի. այլք ուտէին, ըմպէին եւ այլ յիրս
զւարճանային. եւ ես հող տարեալ այսմ իրի
ջանայի՝ ի լրումն հանել զառաջարկեալ զիրս. 70
զի յօգուտ եւ շահաւէտ լիցի ուխտաւորաց
եւ չրջող անձանց: Եւ այս բաւ է իմաստնոց.
ողջ լերուք:

ՄԵԿՆՈՒՄՆ ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԳԱՊԵՏԻ

Իսկ յետ եօթն ամսոյ մեծ խոռովութիւն եւ
չիոթ անկաւ Զաքարիայ վարդապետին հետ 75
իւր հարեղից՝ վասն լիրբ եւ անզգամ կնոջ մի